1893

ՕՐՈՐՈՅԱԳՈՂ

(Ժողովրդական առասպել)

Կես գիշերին մութ խրճիթում
Մայրը լսեց մի խորդյուն*,
Եվ վեր թռավ ահը սըրտում,
Նայեց քնած յուր որդուն։

5 Մի արարած սև ու խավար
Նա նըկատեց սըրտադող,
Եվ ճանաչեց սարսափահար՝
Օրորոցի մի չար գող,

Որ զավակի բուկը բռնած
10 Խեղդում էր սև ճանկերում,
Եվ երեխան աչքերը բաց
Զարչարվում էր ու հևում։

Խելակորույս իսկույն ևեթ
Վրա թռավ կատաղի,
15 Եվ բռնվեցան իրարու հետ
Օրրանի մոտ երեխի։

---

*Խռխռոց, խեղդվողի արձակած ձայնը

Կես գիշերին մութ խրճիթում
Կիսակենդան մանուկին
Իրարից խլել են աշխատում
Ծնող մայրն ու չար ոգին։

Կռիվ են տալիս. նախատում են,
Եվ կրծում են և թքում,
Իրար սեղմում և խեղդում են,
Ճանկռում, ծեծում, ապտակում։

Եվ մայրական անհուն սերը
Ուժ էր տալիս գերբնական...
Եվ ուժասպառ, հաղթված չարը
Թողեց օրրանը մանկան։